Հ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՄԵՐ ԳԵՏԸ

3434



891.99Մ
Հ-30

ՆԿ. Բ.ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

891.99Ա3
Չ-30

# ՄԵՐ ԳԵՏԸ

1.

Յաղլու սարի
կատարին
ձյուն է նստած
վողջ տարին։
Ջյունը հալվում է
կամաց,
կաթիլ — կաթիլ
իջնում ցած,
Թագուն խոսում,
փսփսում,
քարի դիպչում
քչփչում։
Ու ձորերի
փեշերով
հազար առվակ
յերգելով
շտապում են
դեպի վար՝
դառնում գետակ
մի վարար —
այնքան համեղ
ու մաքուր,
վոր կոչվում է
Մեղրաջուր։



2.

Վոլոր — մոլոր
ոձի պես
Մեղրաջուրը
փրփրադեզ
դուրս է գալիս
լայն հովիտ,
փռում ջուրը
իր վճիտ,



Ջուր է տալիս
կոլխոզի
այգուն, արտին
ու ցանքսին,
ապա անցնում
նավով ցած,
պտտացնում
Ջրաղաց։

2004
Гос. Публ. библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна
46797-ան

Վրաններից
ճամբարի
պիոներները
արի,
գետին մոտիկ,
ծառի տակ,
կարթը ձեռին
նստոտած,
ձուկ են որսում
գետակից։
Մի ուրիշ խումբ
լող տալիս
գետի հատակ
ջրերում,
ապա յելնում,
վազվզում
ափի մանրիկ
ավազում։





3.

Հետո անցնում է
հովտից
Մեղրաջուրը
փրփրալից՝
իջնում ձորը
խոր ու նեղ,
իջնում թափով
և այնտեղ
ուժ է տալիս
ահագին
ձորի հիդրո—
կայանին։
Հիդրոկայանը
հսկա
լույս է տալիս
մոտակա
քաղաքներին,
գյուղերին,
պտույտ տալիս
անդադար



3434

մեքենաներ
անհամար։
Ապա յելնում է
հպարտ
փռվում, դաշտում
լուռ, հանդարտ։
Եստեղ, դաշտում
նրա հետ
խառնվում են
յերեք գետ
ու միասին,
լայն, արձակ,
անծայր դաշտով
ընդարձակ
ընթանում են
քլքլում,
արևի տակ
պլպլում։





4.

Ել գետակ չի
սրընթաց,
չարաճճի,
փրփրած,
այլ հսկա գետ
խոր, անտակ։
Ջուրը պղտոր,
ընդարձակ,
վրան կամուրջ
ահագին—
ամուր ճամպա
գնացքին։

Մեծ ու պստիկ
նավակներ
սլանում են
վար ու վեր։

5.

Դաշտի ծայրին,
ծովին մոտ,
նա դառնում է
մտածկոտ,
վոր հեռացավ
նա հավետ
իր ափերից
բուրավետ։
Մին էլ ծովը
անսահման
բաց է անում
իր բերան
և ընդունում
իրա մեջ
Մեղրաջրին
խոր ու մեծ։

0007851

2013

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0007851



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

254-

А. АЙРАПЕТЯН

# НАША РЕКА



ГИЗ ССР АРМЕНИИ ЭРИВАНЬ

ՊԱՏՎԵՐ N 1604 ԳՐԱՆՑՄ N 2682 ԳԼԽԼԻՏԻ ԼԻԱԶ. ՊԱՏ. N 8075 ՏԻՐԱԺ 5000